ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶ ՁՈՐԱԳԵՏԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Ձորագետ համայնք,
ՀՀ Լոռու մարզ, հ. Ձորագետ 1փ. 41 Հեռ. 093-33-88-09
էլ. փոստ dzoraget.lori@mta.gov.am

N Ե- 01/258

«07» Հոկտեմբերի 2021թ

ՀՀ Լոռու մարզպետ
Պ-ն Ա. Խաչատրյանին

Հարգելի պարոն Խաչատրյան

«Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ հոդվածի 4-րդ մասի 9-րդ կետի համաձայն Ձեզ ենք ներկայացնում Ձորագետ համայնքի ավագանու 2021թվականի հոկտեմբերի 06-ի թիվ 18-Ա,19-Ն և 20-Ա որոշումները:

Առդիր՝ 5 թերթ:

ՁՈՐԱԳԵՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Ա. ԳՐԻԳՈՐՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՁՈՐԱԳԵՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի
Ձորագետ համայնք, հասցե ի. 1փ. 41, հեռախոս 093-33-88-09
էլ. փոստ dzoraget.lori@mta.gov.am

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

«06» Հոկտեմբերի 2021 թվականի N 18-Ա

## ՁՈՐԱԳԵՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2021ԹՎԱԿԱՆԻ ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 06-Ի ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով«Տեղական ինքնակառավարման մասին»Հայաստանի Հանրապետության օրենքի 14-րդ հոդվածի 6-րդ կետի՝ Ձորագետ համայնքի ավագանին որոշում է

Հաստատել Ձորագետ համայնքի ավագանու 2021թվականի հոկտեմբերի 06-ի հերթական նիստի օրակարգը:

1.Ձորագետ համայնքի ավագանու 2021թվականի հոկտեմբերի 06-ի հերթական նիստի օրակարգ հաստատելու մասին:

2 Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Ձորագետ համայնքի ավագանու 2020թվականի դեկտեմբերի 25-ի N 28-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին:

3.Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Ձորագետ համայնքի 2021թվականի բյուջեի երրորդ եռամսյակի կատարման ընթացքի վերաբերյալ համայնքի ղեկավարի հաղորդումը ընդունելու մասին:

Կողմ ( 5 ) Դեմ (0) Ձեռնպահ (0)

ՍՈՒՍԱՆՆԱ ԳՐԻԳՈՐՅԱՆ

ԽՍՐԱՅԵԼ ՀԱԿՈԲՅԱՆ

ՀՈՎԻԿ ՇԵՐՄԱԶԱՆՅԱՆ

ՍԱԹԻԿ ՋԱՆԻՆՅԱՆ

ՆԱՐԻՆԵ ՔՈՉԱՐՅԱՆ

ՁՈՐԱԳԵՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Ա. ԳՐԻԳՈՐՅԱՆ

2021թ. հոկտեմբերի 06
հ. Ձորագետ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՁՈՐԱԳԵՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի
Ձորագետ համայնք, հասցե հ. 1փ. 41, հեռախոս 093-33-88-09
էլ. փոստ dzoraget.lori@mta.gov.am

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

«06» Հոկտեմբերի 2021 թվականի N 19-Ն

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՁՈՐԱԳԵՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2020ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 25-Ի N 28-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով«Տեղական ինքնակառավարման մասին»օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետով«Բյուջետային համակարգի մասին» օրենքի 32-րդ հոդվածի 3-րդ մասով «Նորմատիվ իրավական ակտերի մասին»օրենքի 33-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետով և 34-րդ հոդվածով Ձորագետ համայնքի ավագանին որոշում է.

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Ձորագետ համայնքի ավագանու 2020թվականի դեկտեմբեր 25-ի «Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Ձորագետ համայնքի 2021թվականի բյուջեն հաստատելու մասին» N 28-Ն որոշման մեջ կատարել փոփոխություններ և շարադրել նոր խմբագրությամբ համաձայն կից 1, 2, 3, 4, 5, 6 հավելվածների:

Կողմ ( 5 ) Դեմ (0) Ձեռնպահ (0)

ՍՈՒՍԱՆՆԱ ԳՐԻԳՈՐՅԱՆ

ԻՍՐԱՅԵԼ ՀԱԿՈԲՅԱՆ

ՀՈՎԻԿ ՇԵՐՄԱԶԱՆՅԱՆ

ՍԱԹԻԿ ՋԱՆԻՆՅԱՆ

ՆԱՐԻՆԵ ՔՈՉԱՐՅԱՆ

ՁՈՐԱԳԵՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Ա. ԳՐԻԳՈՐՅԱՆ

2021թ. Հոկտեմբերի 06
հ. Ձորագետ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՁՈՐԱԳԵՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի
Ձորագետ համայնք, հասցե հ. 1փ. 41, հեռախոս 093-33-88-09
էլ. փոստ dzoraget.lori@mta.gov.am

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

«06» Հոկտեմբերի 2021 թվականի N 20-Ա

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՁՈՐԱԳԵՏ ՀԱՄԱՅՆՔԻ 2021 ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵԻ ԵՐՐՈՐԴ ԵՌԱՄՍՅԱԿԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԸՆԹԱՑՔԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՀԱՂՈՐԴՈՒՄԸ ԸՆԴՈՒՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 38-րդ հոդվածի 1-ին մասի,1-ին կետով,«Բյուջետային համակարգի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին կետով ՝ Ձորագետ համայնքի ավագանին ո ր ո շ ու մ է՝

Ընդունել ի գիտություն Ձորագետ համայնքի 2021թվականի բյուջեի երրորդ եռամսյակի կատարման մասին Ձորագետ համայնքի ղեկավարի հաղորդումը՝ համաձայն հավելվածի:

| Կողմ ( 5 ) | Դեմ (0) | Ձեռնպահ (0) |
|---|---|---|
| ՍՈՒՍԱՆՆԱ ԳՐԻԳՈՐՅԱՆ | | |
| ԻՍՐԱՅԵԼ ՀԱԿՈԲՅԱՆ | | |
| ՀՈՎԻԿ ՇԵՐՄԱԶԱՆՅԱՆ | | |
| ՍԱԹԻԿ ՋԱՆԻՆՅԱՆ | | |
| ՆԱՐԻՆԵ ՔՈՉԱՐՅԱՆ | | |

ՁՈՐԱԳԵՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Ա. ԳՐԻԳՈՐՅԱՆ

2021թ.Հոկտեմբերի 06
հ. Ձորագետ

Հավելված
Զորագետ համայնքի ավագանու
«06» Հոկտեմբերի 2021թ. N 20 -Ա որոշման

# ԶՈՐԱԳԵՏ ՀԱՄԱՅՆՔԻ 2021ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵԻ ԵՐՐՈՐԴ ԵՌԱՄՍՅԱԿԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԸՆԹԱՑՔԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՀԱՂՈՐԴՈՒՄ

Զորագետ համայնքի 2021վականի բյուջեի երրորդ եռամսյակը կատարվել է.
Զորագետ համայնքի 2021թվականի բյուջեի երրորդ եռամսյակի ընդամենը փաստացի եկամուտները կազմել են 6828.2 հազար դրամ, ծրագրված (ճշտված)7394.9 հազար դրամի նկատմամբ, կամ կատարողականը կազմել է 92.3%: Ընդ որում՝ Զորագետ համայնքի 2021 թվականի բյուջեի երրորդ եռամսյակի վարչական մասով ծրագրված (ճշտված) 7394.9 հազար դրամ ընդամենը եկամուտների դիմաց փաստացի մուտքագրվել է 6828.2հազար դրամ՝ ապահովելով 92.3% կատարողական:
Զորագետ համայնքի 2021 թվականի բյուջեով երրորդ եռամսյակի սեփական եկամուտները ծրագրվել են 3245.9 հազար դրամ, որի դիմաց փաստացի կատարողականը կազմել է 2679.1հազար դրամ կամ 82.5%: Սեփական եկամուտների փաստացի հավաքագրման ցուցանիշը ավել է գանձվել 2020 թվականի համապատասխան ցուցանիշից 1179.9 հազար դրամով:
Զորագետ համայնքի 2021 թվականի բյուջեի երրորդ եռամսյակի միջոցների հաշվին իրականացվել է 4810.7 հազար դրամի ծախսեր՝ կազմելով ճշտված ծրագրի 63.4%-ը: Հարկ է նշել, որ 2021 թվականի երրորդ եռամսյակի ավարտին պարտքեր չեն թողնվել և փաստացի կատարողականի սահմաններում բոլոր ստանձնած պարտավորությունները ամբողջությամբ ֆինանսավորվել են:
Ստորև ներկայացվում է Զորագետ համայնքի 2021 թվականի բյուջեի երրորդ եռամսյակի փաստացի եկամուտների և ծախսերի առավել մանրամասն քանակական և համեմատական վերլուծությունը:
Հարկեր և տուրքեր.
- Գույքահարկի գծով երրորդ եռամսյակի ընթացքում փաստացի կատարողական ցուցանիշները կազմել են 213.0 հազար դրամ, ծրագրված (ճշտված) 620.0 հազար դրամի նկատմամբ կամ կատարողականը կազմել է 34.4%, որը 2020 թվականի փաստացի ցուցանիշից պակաս է 235.5 հազար դրամով:
Հողի հարկի մասով երրորդ եռամսյակի մուտքերը կազմել են 0.1 դրամ, ծրագրված (ճշտված)2.0 հազար դրամի նկատմամբ կամ կատարողականը կազմել է 0%, որը 2020 թվականի փաստացի ցուցանիշից պակաս է գանձվել 62.0 հազար դրամով:
Համայնքի բյուջե մուտքագրվող անշարժ գույքի հարկի գծով երրորդ եռամսյակի ընթացքում փաստացի կատարողական ցուցանիշները կազմել են 196.5 հազար դրամ, ծրագրված (ճշտված) 224.4հազար դրամի նկատմամբ կամ կատարողականը կազմել է 87.6%,
Տեղական տուրքերի գծով երրորդ եռամսյակի փաստացի կատարման ցուցանիշները կազմել են 814.3 հազար դրամ՝ նախատեսված (ճշտված)990,0 հազար դրամի դիմաց, կամ կատարողականը կազմել է 82.3%, որը 2020 թվականի փաստացի ցուցանիշից ավել է գանձվել 81.3 հազար դրամով:
Պաշտոնական դրամաշնորհներ.
Պաշտոնական դրամաշնորհների մասով երրորդ եռամսյակի մուտքերը կազմել են 4149.1 հազար դրամ, ծրագրված (ճշտված) 4149.0 հազար դրամի նկատմամբ, կամ կատարվել է 100%, որից ՀՀ պետական բյուջեից ֆինանսական համահարթեցման սկզբունքով տրամադրվող դոտացիաների և այլ դոտացիաների գծով փաստացի մուտքերը կազմել են 4149.1 հազար դրամ:
Այլ եկամուտներ.
Զորագետ համայնքի 2021 թվականի բյուջեով երրորդ եռամսյակի այլ եկամուտների գծով նախատեսված 1411.5 հազար դրամի դիմաց , փաստացի մուտքագրվել է 1455.1 հազար դրամ, որից.
- գույքի (այդ թվում հողերի) վարձակալությունից եկամուտների գծով փաստացի մուտքերը կազմել են 11,5 հազար դրամ,
- Ընթացիկ ոչ պաշտոնական դրամաշնորհների գծով փաստացի մուտքերը կազմել են 1400.0 հազար դրամ,
Համայնքի վարչական տարածքում ինքնակամ կառուցված շենքերի, շինությունների օրինականացման համար վճարներ դիմաց , փաստացի մուտքագրվել է 43.6 հազար դրամ
*Ծախսեր*

Զորագետ համայնքի 2021 թվականի երրորդ եռամսյակի բյուջեի միջոցների հաշվին կատարվել է 4810.7հազար դրամի ծախսեր, ծրագրված (ճշտված) 7589.3 հազար դրամի դիմաց կամ ծրագրվածի 63.4%-ը:
Զորագետ համայնքի 2021 թվականի երրորդ եռամսյակի բյուջեի ծախսերի կատարողականն ըստ բյուջետային ծախսերի տնտեսագիտական դասակարգման հոդվածների խմբերի ունի հետևյալ պատկերը.

**հազար դրամ**

| Բյուջետային ծախսերի տնտեսագիտական դասակարգման հոդվածների խմբերի անվանումը | Տարեկան ճշտված բյուջեով նախատեսված | Փաստացի ծախս | Կատարման % |
|---|---|---|---|
| Աշխատանքի վարձատրություն | 3750.0 | 3287.7 | 87.7 |
| Ընդհանուր բնույթի հանրային ծառայություններ | 250.0 | 250.0 | 100 |
| Ծառայությունների և ապրանքների ձեռքբերման | 3230.0 | 1273.0 | 39.4 |
| Վարչական սարքավորումներ | 200.0 | 0 | 0 |
| Այլ մեքենաներ և սարքավորումներ | 159.3 | 159.0 | 99.8 |
| Ընդամենը | 7589.3 | 4810.7 | 63.4 |

Զորագետ համայքնի 2021 թվականի երրորդն եռամսյակի բյուջեի ծախսերի կատարողականն ըստ բյուջետային ծախսերի գործառական դասակարգման բաժինների ունի հետևյալ պատկերը

հազար դրամ

| Բյուջետային ծախսերի գործառնական դասակարգման բաժնի անվանումը | Տարեկան (ճշտված) բյուջեով նախատեսված | Փաստացի կատարված | Կատարման % |
|---|---|---|---|
| Ընդհանուր բնույթի հանրային ծառայություններ | 7309.3 | 4730.9 | 64.7 |
| Հանգիստ, մշակույթ և սպորտ | 280.0 | 79.8 | 28.5 |
| Ընդամենը | 7589.3 | 4810.7 | 63.4 |

ԶՈՐԱԳԵՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Ա.ԳՐԻԳՈՐՅԱՆ